

քը մէյմէկ հաւկթի պէս կը ջախջախէին: Լցուած էր այն տեղը խեղդուած մարդիկներու դիակներով, և դեռ ուրիշ շատերն ալ խեղդուելու վտանգի մէջ էին. որուն գլուխը ջախջախած, որուն թիւերը կոտորած և շատերու ալ աղիքը դուրս թափած: Ծովուն գոշումէն ոչ ինչ նուազ էր արանց և կանանց զարհուրագին ողբաձայնութիւն. ներք՝ որոնք ծովուն մօտերը կը բնակէին: Եւ ուր որ նախընթաց օրը փառաւոր ճեմելեաց տեղ էր, հիմա Մեսիհայի նեղուցէն աւելի վտանգալից անցք մը և կատաղի Ովկիանոս մը դարձած էր: Հազարաւոր Նէապոլիցի ազնուականներ ձիու վրայ հեծած հոն եկեր դիզուէր էին իրենց հայրենեաց վերջին յուղարկաւորութենէն ներկայ գլուխու համար, որոնց խմբին հետ ես ալ միացած՝ սկսայ աւելի ևս քաջալերել զիս, գոնէ անոնց հետ մեռնելու յուսով: Բայց յանկարծակի մեծ խուժովութիւն մը ծագեցաւ, վասն զի երկիրը, որուն վրայ կեցեր էինք, սկսաւ կամաց կամաց խորասոյգ ըլլալով, ծովուն տակը մոռնել: Մենք, փախանք անկէ, և բարձր դիրքեր քաշուեցանք: Եւ յիշաւի տարօրինակ բան մ'էր այս սոսկալի պատիժը մարդկան վրայ. զերկինքը այնպէս բարկացած տեսնել, և զծովը այնպէս անգուլթ գազան մը դարձած. լերան պէս հազարաւոր ալիքներ, ոչ սև ոչ կապոյտ, ինչպէս ուրիշ ալեկոծութեանց ատեն կը պատահէր, այլ բոլորովին ճերմակ, որ կարծես թէ Գաբրայի կղզիէն դէպ 'ի Նէապոլիս կու գային: Կղզւոյն թագուհին, որ դեռ երիտասարդ էր. բոկոտն, և կանանց մեծ խումբ մը հետը առած Ս. Աստուածածնայ ընծայուած եկեղեցեաց այցելութեան կ'երթար: — Նաւահանգստին մէջի գտնուած նաւերէն և ոչ մէկը կորցաւ ազատիլ, և երեք հատ մեծամեծ նաւեր, որոնք Կիպրոսէն եկած էին այնչափ ծովը անցնելով, առաւօտը երբ ճամբայ պիտի ելլէին, ամենքն ալ դրժբաղդութեամբ ընկղմեցան, որոնց մէջէն և ոչ մէկ հոգի մը կրցաւ ազատիլ:

Նմանապէս ուրիշ մեծամեծ նաւեր, որոնք նաւահանգստին մէջ խարխիս ձըգած կեցեր էին, մէկմէկու զարնուելով, ջաղջախեցան բոլոր մէջի գտնուած նաւաստեօք հանգերձ: Այնչափ բազմաթիւ նաւերէն մէկ մը միայն կրցաւ ազատիլ վտանգէն, որուն մէջ չորեք հարիւր չարագործ անձինք կային, յաքսորս դատապարտուած՝ որ Սիկիլիոյ պատերազմին համար կ'աշխատէին. ասոնք մինչև 'ի յետին շունչ ծովուն կատաղութենէր դէմ դնելով, նաւուն հետ մէկ տեղ կեանքերնին ալ ազատեցին, որովհետև կամաց կամաց երկինքը սկսաւ պարզուիլ, և ովկիանոսին կատաղութիւնը իջնալ, այն միջոցին՝ երբ գողերն ալ բոլորովին ուժէ ընկած էին: Եւ ահա այս կերպով այնչափ խուռն բազմութեան նաւերու մէջէն, ամենէն չարագործները միայն ապրեցան՝ որով և լուկանոս քերթողին ըսածը կարծես թէ ստուգուեցաւ, թէ՛ կամ բախտը աջակից է չարագործաց, և կամ թէ Աստուած այնպէս ուզեց. և կամ, անոնք աւելի ապահով են վտանգայ մէջ, որոնք իրենց կեանքը ոչինչ կը համարին:

ԲԵՂԻՍՏՐՈՒ

### ԹՂԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Պատմական տեղեկութիւնք. — Բամբակէ և ետքն ալ կտաւէ թուղթ շինելու գիտը նախ Եւրոպիոյ արևմտեան հարաւային կողմը մոտաւ, այսինքն 'ի Սպանիա և 'ի Սիկիլիա, արաբացւոց ձեռքով. իսկ Եւրոպիոյ արևելեան հարաւային կողմը մոտաւ խաչակրաց ձեռքով: Ուրեմն Ասիայէն Եւրոպա եկաւ թղթագործութեան արուեստը, որ արդէն Բրիտանոսէ ետքը երկրորդ դարուն մէջ գտնուած էր 'ի Ճենաստան, ուր թղթոյ թերթերը կը շինէին պամպուրուած ծառին կեղւններէն, կանեփի և



բամբակի ցնցոտիներէն<sup>1</sup> . ճենաց թղթոյ գիւտը , կը համարուի Գրիստոսի թուականին 89 և 105 ամաց մէջ տեղուանք :

Պապիրի<sup>2</sup> գործածութիւնը , զոր Եգիպտոս կը շինէին պապիր ըսուած ծառոյն կեղեկներէն , Եւրոպայի մէջ իննբորոգ դարուն միջոցները դադրեցաւ , երբոր վենետիկցիք , Նէապոլեցիք և Սիկիլիացիք Արևելքի հետ վաճառականութիւն ընելով , բամբակի թուղթը Եւրոպա մտուցին , որ այն ժամանակ շատ կը գործածուէր Արևելքի կողմերը , և անկէ ետքը յարեմուտ ալ սկսաւ :

Չորեքտասներորդ դարուն մէջ թղթաշինութեան այլ և այլ գործարաններ կային յիտալիա , որոց մէջ շարժիչ զօրութիւնը ջուրն էր : Եւ նոյն դարուն մէջ Անգլոնա քաղաքին մօտ Ֆապրիա նոս ըսուած գեղին գործարանէն կ'առնոյր Պոտոնի իր գեղեցիկ տպագրութեանց թուղթերը : Նոյն դարուն մէջ Գաղղիա և Գերմանիա ալ մտաւ թղթաշինութեան արուեստը . իսկ Անգլիա շատ ուշ մտաւ . և մինչև որ մտաւ , Անգլիացիք Գաղղիայէն կ'առնուին թուղթը : Գանի որ թղթաշինութեան արուեստը դեռ Եւրոպա չէր մտած , մագաղաթի<sup>3</sup> վրայ կը գրէին ու կը տպագրէին , որ ոչխարաց մորթ էր . վելէն<sup>4</sup> ըսուածն ալ կը գործածէին՝ որ որթուց մորթ էր : Թղթի արուեստին սկիզբները , թուղթերը աւելի թանձր ու աւելի հաստատուն կը շինէին , կանեփի և կը տաւի ցնցոտեաց ընտիր կտորուանքէն , որպէս զի մորթոց կարծրութեան ու հաստատութեան հաւասարին . զանգուածը սանդի տոռներով կը ծեծէին և թուղթը ձեռքով կը շինէին ու մածուցիւ<sup>5</sup> կը սոսընձէին : Այս սաստիկ կերպով սոսընձած թուղթերը մինչև այսօր կը պահեն իրենց առաջին յատկութիւնը : Յամին 1750 Պապէրվիլ , մինչև

չև այն ժամանակ գործարաններէն և լած թղթոց խորտաբորտութեան դիմացը առնլով , ազնիւ և ողորկ թուղթեր շինեց և անոնցմով Վերգելիոսը տպագրեց յամին 1757 : Այս տպագրութեան գեղեցկութիւնը ի նախանձ շարժեց զԱմբրոսիոս Տիտոյ Գաղղիացին , և Պապէրվիլին շինածներուն նըման ազնիւ թուղթեր շինեց , և անուանեց Թւոշթ վելէն<sup>1</sup> :

Մինչև այն ժամանակ , ցնցոտիները սանդի տոռներով ծեծելով թղթոյ զանգուածը կը ձևացնէին : Այս կերպը դանդաղ էր , մեծագոյն շարժիչ զօրութեան և ընդարձակ տեղւոյ կարօտ : Հոլանտա , ուր ջրոյ հոսանք չկան և ջաղացները քամիով կը շարժին , ցնցոտիները բզկտելու հնարք մը գտնուեցաւ . զաններ շինեցին որք պողովատեայ սայրասուր թիթեղներով զինեալ էին . այս գլաններուն աւելի կատարեւադործածները մինչև հիմա կը գործածուին և կոչին սիւնակ<sup>2</sup> : Միւսակները անցեալ դարուն կէսերը Գաղղիա մտան Մոնկյոֆիէի ձեռքով : Շարունակեալ թղթոյ մեքենայները<sup>3</sup> առաջին անգամ 1799ին Փրանչիսկոս Տիտոյի թղթատան մէջ գործածուեցան . զասոնք ալ զանոգը նոյն գործատան մէջի պաշտօնեայներէն մէկն էր , Հոպպերդ անուանով : Տիտոյ քանի մը փորձեր ըրաւ շարունակեալ թղթոյ , բայց ժամանակին խռովութիւնները և Գաղղիոյ մէջ մեքենագործաց նուազութիւնը ստիպեցին զինքը Անգլիա անցնելու , ուր յամին 1801 ճոն Կէմպլի անգլիացւոյն հետ միանալով՝ ամբաւ աշխատութիւններէ և ծախքերէ ետեւ , շարունակեալ թղթոյ շինութեան կերպը կատարեւադործեց 1803ին , որ այս դարու գեղեցիկ գիւտերէն մէկն է : 1809ին ճոն Տիքքէնսըն շարունակեալ թուղթեր շինելու ուրիշ կերպ մը գտաւ . այսինքն մետաղէ գլանի մը օդը շնչելով ու դատարկելով , որ կը դառնայր սիւնակի մը մէջ , սիւն

1 Chiffon.

2 Papyrus.

3 Parchemin.

4 Vêlin.

5 Gélatine.

1 Papier vélin.

2 Piles.

3 Machine à papier continu.



նակն ալ թղթոյ զանգուածով լեցուած էր և ասոր մէջ կիտով չափ կ'ընկղմէր գլանը: Ձախդուածը գլանին կողերուն վրայ կ'պնելով, թղթոյ թերթեր կը հանէր ու գլանէն բաժնուելով կ'անցնէր ուրիշ գլանի մը վրայ, որ թաղեքով պատած էր, ու այս կերպով շարունակեալ թուղթեր կը շինուէին:

Այս մեքենայն որ Տիքքէնսընի անուանով կը կոչուի, ինչպէս միւսն ալ Տիտոյի անուամբ, սուսխարակ<sup>1</sup> ըսուած մեքենայէն շատ վար է, որ անոր տեղը բռնեց, և շուտ մը վերջին կատարելութեան հասաւ. և 1833էն մինչև հիմա մեքենական թուղթեր կը շինուին այնպէս կատարեալ՝ որ անկէ աւելին յուսալ անկարելի է:

Շիւտքիւն քոթոյ: — Թուղթը կը շինուի հինցած և պատըռտած բուսական հիւսուածներէ. զորս Յնցուտի կ'անուանեմք: Իսկ բուսական հիւսուածներն են բամբակէ, կանեփէ ու կտաւէ: Գնցողները պէտք է քայքայել ու ամենանուրբ թելերու վերածել՝ որոց մէ որ ձևացած են: Թղթոյ գործարանաց տէրերը ստակով ցնցողները կը գնեն, թէ սպիտակ եղեր է և թէ գուռաւոր. սպիտակները հասարակօրէն կտաւեղէններու կտորուանք կ'ըլլան. իսկ գուռաւորները բամբակեղէնի: Ասոնց մէջ պէտք է խառնել չուանի մնացորդներ, խծուծներ և անկուածոց աւելցուք. բայց զասոնք աւելի ցնցողեաց սակաւութեան պատճառաւ կը գործածեն, և այն՝ հասարակ թուղթերու: Գնցողները երբոր գործարան կը մտնեն, տասնհինգէն մինչև քսանչորս տեսակ կը զատուին, ու այս գործողութիւնը տրոհուումն<sup>2</sup> կը կոչուի, իւրաքանչիւր տեսակները առանձին առանձին կը ձևանան ու կը պատրաստուին: Տրոհումէն ետքը առաջին գործողութիւնն է մաքրումն<sup>3</sup> որ չոր կը կատարուի: Գնցողները կը դրուին ակաւ-

ներով շինուած գլանի մը մէջ, որ դէպքէ կը կոչուի. այս դեռ արագ արագ դառնալով կը մաքրէ զանոնք յարգէ ու փռ շիէ, որք կրնան կալած ըլլալ անոնց հետ. ետքը կոնաձև խաւքալի<sup>4</sup> մը մէջ կը մտնեն, որ ներսի կողմանէ փայտե ակաւայներ ունի ու մետաղեայ անբաւ ծակտիք ունեցող տախտակով պատած է, որոյ մէջէն կ'անցնի փոշին: Այս խաւքալին մէջ ցնցողները նորէն լաւ մը կը խառնուին կը ծեծուին ու միւս ծայրէն մաքրուած դուրս կ'ելնեն, և յետոյ կը լուացուին: Միշտ վերջին ժամանակները ցնցողները նկուղներու մէջ կը դրնէին ու երբեմն երբեմն վրանին շուրս կ'ելլով, կ'աւելցնէին անոնց ջերմութիւնը, խմորում մը գործելով, որ փրտոքիւն<sup>5</sup> կ'ըսուէր, և երեք շաբաթ կը տւէր: Այս կերպով հիւսուածոց նետրոները կակղնալով, իրենց քայքայումը կը դիւրանայր և թղթոյ զանգուածը<sup>6</sup> կը ձևանայր: Բայց այս խմորումը թէ որ ըստ կարգի չկատարուի, զանգուածը կը խանգարուի ու թուղթն ալ ամուր չըլլար: Հիմա չեն փտեցնէր ցընցողները, այլ կը լուանան կրկնայատակ ու մեծամեծ տաշտերու մէջ: Յընցողները կը թրջեն ջրով, որոյ մէջ խառնած է կիր կամ նատրոն այն չափով, որչափ ցնցողեաց հանգամանքը կը պահանջեն: 500 հազարազրամ ցընցողոյ՝ 6 հազարազրամէն մինչև 10 հազարազրամ նատրոն<sup>6</sup> կը գործածուի: Երբոր ցնցողք լաւ մը թրջին՝ պէտք է ջրոյն երեսը գոլորչոյ հոսանք ուղղել, որք կը ստիպեն զջուրը բարձրանալ մինչև տաշտին գագաթը կեդրոնական խողովակով մը, և անկէ դէպ'ի վար զանգուածոյն վրայ թափելով միօրինակ ուռգել: Գնցողք հինգ կամ վեց ժամ այս կերպով լուացուելով. ամեն լուծական նիւթերէ ու կալէքարերէ<sup>6</sup> կը զատուին:

1 Diable.

2 Blutoir.

3 Pourrissage.

4 Pâte.

5 Soude.

6 Alkali.

1 Machine plate.

2 Délissage.

3 Nettoyage.



Սկիզբները լուացմունքը բաց տալ- տերու մէջ կը կատարէին, յետոյ գոց տալտերու մէջ սկսան կատարել. անկէ վերջն ալ դաւանաձև ու զաւանցիկ տալ- տերու մէջ, և վերջի ժամանակներս եր- կաթէ գունտերու մէջ, զորս Տոնքին հը- նարեց: Այս գունտերուն կողերը բա- ւականապէս հաստատուն շինուած են, որպէս զի կարենան քանի մը մթնոլորտ ճնշման դիմակալել: Այս մեծամեծ գուն- տերը երկու հեծարաններու վրայ կե- ցած են ու դիւրաւ ամեն կողմ կը դառ- նան: Գունտին մէջ երկաթէ թիակ մը կայ, որ լաւ մը կը խառնէ ու կը ծծէ ցնցոտիները: Ամեն գնտաձև կաթնայի մէջ 1000 հազարադրամ ցնցոտի կըր- նայ դրուիլ: Կաթնային կողից վրայ լայն բացուած մը կայ, ուսկից կրնայ ներս մտցուիլ. այս բացուածքը գազաթ- նահայեաց է հոլովման առանցից: Եր- բոր պէտք ըլլայ ցնցոտի լեցնել կաթ- նային մէջ, կը դարձունեն ծակը դէպ 'ի վեր առաստաղ, և կամաց կամաց ցնցոտիները ներս կը լեցնեն ու լաւ մը կը զետեղեն: Յետոյ պատրաստուած ջուրը կը լեցունեն այնչափ, մինչև որ կաթնային ընդունակութեան մի քա- ոորդ մասը պարապ մնայ. և ամեն ծակ կը գոցեն ու գոլորշիք կը խաւրեն ներս, որոյ ձգտումը և ջերմութիւնը ըստ ցըն- ցոտեաց տեսակին կը տարբերի: Այն ցնցոտեաց համար որոց վերայ նախկին պատրաստութիւնները եղած չեն ըստ արժանւոյն, գոլորշոյ ձգտումը պէտք է տանիլ մինչև 3 մթնոլորտ ու ջերմու- թիւնը 133°: Այս կերպով կրնայ քա- կուիլ թանձր թելից կծիկը<sup>1</sup>, ինչպէս նաև կելուց ու յարդերուն հիւսուած- քը. յարդէն ուղեցին հասարակ թուղթ շինել գոլորշոյն ձգտումը մինչև 5 մթն- ոլորտ յառաջ մղելով: Գունտը երբոր ցնցոտեօք, ջրով և գոլորշով լեցուի, պէտք է ամեն ծակերը գոցել, ու առանց ցնցելու կամաց կամաց դարձնել, մէկ ժամու մէջ 60 կամ 80 պտոյտ ընել տալով: Կաթնային դառնալու ժամա-

նակ, ցնցոտիք ամեն կողմէն եռացեալ ջուրը կը շօշափեն, որոյ բարեխառնու- թիւնը միշտ նոյնպէս կը պահուի՝ եր- բեմն երբեմն տաք տաք գոլորշի ներս խաւրելով: Իւրաքանչիւր կաթնայ այս կերպով 6—8 ժամ կը դառնայ, և յե- տոյ ցնցոտիք զուտ ջրով լուանալով գոր- ծողութիւնը կը մննայ. — Անկէ ետքը կրկնայատակ սապատներու մէջ կը դը- րուին և կը տարուին այն տեղ ուր ցըն- ցոտիք Սիռնակ ըսուած կազմարանին մէջ կը դրուին, ու հոն կը կենան առա-ւել կամ նուազ, որչափ կ'ուզեն սպի- տակութիւն տալ թղթոյ զանգուածին: Սիւնակ ըսուածը ձուած է մեքենայ մի- է, որ սովորաբար կը շինուի թափու- երկաթէ, փայտէ, նաև տեղ տեղ քա- րէ: Սիւնակին երկայնութեան մէջտեղ անջրպետ<sup>2</sup> մի կայ ըստ ուղղութեան հո- լովման առանցից: Անջրպետին մի կող- մը հաստատուած է փայտեղէն կամ ձու- լածոյ գլան մը, որ երկաթէ սայրասուր թիթեղներով դիւնուած է և լծակի մը ձեռքով կրնայ մծտենալ առաւել կամ նուազ շեղ մակարդակի մը, որոյ այն մասը որ գլանին տակ կ'իյնայ, նոյնպէս զինուած է թիթեղներով: Ջրաթաթախ ցնցոտիները գլանին տակէն անցնելով, կտոր կտոր կ'ըլլան. գլանին մէջ մտած աղտոտ ջուրը ձամբով մը դուրս կ'ել- նէ. ուրիշ ձամբայէ մը անդադար մա- քուր ջուր ներս կը մտնէ: Եեղ մակար- դակին վարի կողմը աւազնոց<sup>3</sup> մը կայ, ուր ծանր նիւթերը վար երթալու ժա- մանակ կը ժողովին:

Գնցոտիք եթէ իսկոյն պիտի չձեռ- մկնան կազեղէն քլուիւ, պէտք է զա- նոնք բաւական երկայնութեամբ թել թել ընել<sup>4</sup> որպէս զի ետքը դիւրու- թեամբ լուացուին: Իսկ թէ որ պէտք ըլլայ շուտով ձերմկցնել, կամ առանց ձերմկցունելու գործածել, յայնժամ պէտք է թելերը մանրել<sup>4</sup> առանց բոլո-



րովին իրենց համախմբութիւնը կորուսանելու, և այսպէս դիւրաւ կը ճերմըկնան :

Կը շարունակուի :

Երեւոյ պացոց կրօնքն և սովորոյքն երբ :

Յունական բառէ ելած է Երիտւոյիս և Երիտւոյացի անունը, որ իրենց թխամորթութիւնը կը բացատրէ. բայց ժողովուրդը կը նախադասէ Ակադիացի ըսուիլ, և թագաւորութիւնն ալ Ակադի կամ Կեզ անուանել : Հապէշ անունը տալ Տաճիկներուն սեփհակն է, և ըսել է ժողովուրդ խառնեալ. ասկէ ելած է Եւրոպացոց Ապիսսիմի բառը՝ որ հիմա սովորական եղած է :

Եթովպացիք աշխարհին գլխաւոր բնակիչքը կը համարուին. բարձրահասակ են, երկայնահեր և դիմաց գծադրութեամբ Եւրոպացոց նման. գոյներնին միայն ուրիշ ծանօթ ազգերէ կ'որոշէ զիրենք. ոմանք գունատ թանաքի կը նմանորեն զանոնք և կամ հասած ձիթապտղի. ոմանք ալ անագախառն պղնձի : Բայց դիտուած է գունոց զանազանութիւն ալ՝ Եթովպիոյ զանազան գաւառներու տակ. բարձրաւանդակներուն վրայ բնակողներուն միւթը պայծառ է. Դիկրէ բնակողներունը գրեթէ ճերմակ. իսկ ցած և ճախճախուտ տեղերունը գրեթէ սև : Գեղեցիկ կը համարուին սևամորթները. անոր համար շատ սպիտակներ իրենք զիրենք կը սեջընեն. գեղեցիկ է աշուրին, սպիտակ և գեղեցկայարմար ակառներով, բարեձև քիթով, անմօրուս՝ և կորովի անդամներով :

Կիզ լեզուն՝ զոր Դիկրէի մէջ կը գործածեն և որով բոլոր Եթովպացոց զրեանքը գրուած են և գիտունք աւարերէնի բարբառ մը կը համարին. Աւնարի լեզուն ալ որ ժի դարէն ետքը արքունեաց լեզու եղած է արաբե-

րէնի շատ մօտ է արամեական բառերու մէջ, բայց բառերուն դասաւորութիւնը ուրիշ սկիզբ մը ունի : Կիզ լեզուն քան զարաբացին աւելի դժուարալուր, և դժուարահնչիւն է. վեց բաղաձայն ունին որոնց խստութիւնը եւրոպացոյ մը չնչափողը չկրնար ձևացնել. Ամհարին թէպէտև քաղցրագոյն քան զառաջինը՝ բայց չունի անոր քերականական հարստութիւնը՝ ինչպէս ունին բոլոր սեմական լեզուները : Կիզին մէջ յունական բառեր շատ կան. ամենէն զուտ և անխառն բարբառը Դիկրէին է, իրեն այբբէնգիմը շատ դարերէ 'ի վեր մասնաւոր ձև մը և եղանակ մը առած է. այսինքն սեմական նշանազիրները խառնուած յոյն եգիպտական նշանազրոց հետ, դարձեալ ձայնաւորներուն տեղ օտար նշանաձևներ փոխանակած ըլլալով՝ գրութիւնը տեսակ մը վանդական<sup>1</sup> ոճ առեր է :

Բնիկ Եթովպացոց մեզի ծանօթ պատմութիւնը Սաբա դիխոյէն առաջ չանցնիր, որոյ որդին կ'ըսեն կոչուեցաւ Մէնիհէյէք. և թագաւորութեան յաջորդութիւնը հասաւ ինչուան Քրիստոսի թուականութեան 960 երորդ տարին : Երկու եղբարց՝ Ապրահայի և Ապրահայի ժամանակ (330) քրիստոնէութիւնը մտաւ իրենց երկիրն ալ : 522ին Քալէպ թագաւորը՝ որ և Էլէսպարսն կը կոչուէր, Յուստինիանոս կայսեր դաշնակից՝ Արաբիոյ մէջ շատ պատերազմներ ըրաւ Հրէից և Քորէշիդներու դէմ : Զակայիք հարստութիւնը 340 տարի իշխեց, ուսկից էր Լալիպալա թագաւորը, որ ապառաժ տեղուանքը շէնցուց և ինը եկեղեցի փորել տրուաւ քարերու մէջ. որոնց առաստաղները սիւներու վրայ հաստատուած, և պատերը արաբացի ճաշակով զարդարուած են, Լալիպալայի գերեզմանը այս եկեղեցիներէն մէկուն մէջն է, և Գոյգոթա կ'ըսուի :

Հիմա Եթովպացոց և Եւրոպացոց մէջ բաժանման պատուար մը քաշուած

<sup>1</sup> Gheez.

<sup>1</sup> Syllabique.